



**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՃՇՀԱՀ)**

Հ ա ս տ ա տ վ ա ծ է

Ճարտարապետության և շինարարության

Հայաստանի ազգային համալսարանի

Գիտխորհրդի 2018թ. ապրիլի 17-ի նիստում

(արձանագրություն № 01-04/18)

Գ ի տ խ ո ռ հ ը ղ ի ն ա խ ա գ ա հ , ո ե կ տ ո ռ ՝

Գ. Շ. Գ ա լ ս տ յ ա ն

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ**

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ - 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	5
3. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ	10
4. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	10
5. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	13
6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ	14
ՀԱՎԵԼՎԱԾ 1.	20
ՀԱՎԵԼՎԱԾ 2.	

- 1.1. Սույն կարգի համար հիմք է հանդիսացել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը:
- 1.2. Սույն կարգով կարգավորվում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմավորման, ատեստավորման արդյունքների բողոքարկման հետ կապված հարաբերությունները, որոնք տարածվում են ուսուցման բոլոր ձևերով բարձրագույն կրթություն ստացող շրջանավարտների վրա:
- 1.3. Բակալավրի ավարտական աշխատանքը սովորողի ինքնուրույն, տեսական, նախագծային կամ կիրառական նշանակության աշխատանքն է, որը հանդիսանում է բակալավրի ուսումնառության հանրագումարը և հայտանշում է սովորողի մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները մասնագիտական խնդիրներ վեր հանելու, ուսումնասիրելու և լուծման ուղիներ գտնելու գործում:

Ավարտական աշխատանքը.

- 1.4. Ավարտական աշխատանքի կատարումը և հրապարակային պաշտպանությունը ամփոփիչ ատեստավորման պահանջներից են:
- 1.5. Ավարտական աշխատանքը բակալավրի կրթական ծրագրի պարտադիր ամփոփիչ բաղադրիչն է, որի պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում է 8-րդ կիսամյակում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ կիսամյակում:
- 1.6. Ավարտական աշխատանքի պատրաստման և պաշտպանության համար բակալավրի կրթական ծրագրում նախատեսվում է նվազագույնը 12 կրեդիտ աշխատաժամակ:
- 1.7. Մագիստրոսական թեզը մագիստրոսի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում է 4-րդ կիսամյակում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 5-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության համար մագիստրոսի կրթական ծրագրում նախատեսվում է 30 կրեդիտ աշխատաժամակ:
- 1.8. Ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունն ու բաշխումն իրականացնում է մասնագիտական ամբիոնը: Թեմաները հաստատվում են ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից¹ և հրամանագրվում՝ ռեկտորի հրամանով հետևյալ ժամկետներում.
 - բակալավրիատի առկա ուսուցման ավարտական կուրսի համար՝

¹ «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ», կետ 3՝ հաստատված է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով:

մինչև տվյալ ուսումնական տարվա հոկտեմբերի 10-ը, իսկ հեռակա ուսուցման ավարտական կուրսի համար՝ մինչև հոկտեմբերի 20-ը,

- մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսի համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա նոյեմբերի 30-ը, իսկ հեռակա ուսուցման առաջին կուրսի համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա նոյեմբերի 20-ը:

1.9. Ավարտական աշխատանքը/մագիստրոսական թեզը պետք է ներառի նաև տնտեսագիտության, բնապահպանության և/կամ կենսագործունեության անվտանգության բաժիններ (բացառությամբ «Ճարտարապետություն», «Դիզայն» մասնագիտությունների), «Ճարտարապետություն» մասնագիտության դեպքում՝ հարակից ամբիոնների կամ շինարարական կոնստրուկցիաների գծով, «Դիզայն» մասնագիտության դեպքում՝ բնապահպանական խնդիրների խորհրդատվություններ:

1.10. Մասնագիտական ամբիոնների ուղղորդմամբ նշանակվում են խորհրդատուներ համապատասխան ամբիոններից:

1.11. Ռեկտորի հրամանով ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատումից հետո սկսվում է դրանց կատարման աշխատանքները:

1.12. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի կատարման համար նշանակված ղեկավարներն ու խորհրդատուները ընտրվում են համալսարանի կողմից վերոնշյալ անձանց ներկայացվող պահանջների պարտադիր պահպանմամբ: Մագիստրոսական թեզի ղեկավարի գիտական աստիճանի առկայությունը, որպես կանոն, պարտադիր է:

1.13. Համաձայն տվյալ տարվա ուսումնական գործընթացի ժամանակացույցի՝ ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի կատարման ընթացքում մասնագիտական ամբիոնի կողմից կատարվում են փուլային աստեստավորումներ.

- բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքի համար՝ երեք փուլով,
- մագիստրատուրայի առկա ուսուցման մագիստրոսական թեզի համար՝ չորս փուլով,
- մագիստրատուրայի հեռակա ուսուցման մագիստրոսական թեզի համար՝ հինգ փուլով:

Ատեստավորման ժամկետները սահմանված են ուսումնական գործընթացի ժամանակացույցում: Ժամկետների մասին ուսանողները տեղեկացվում են նախապես:

1.14. Ավարտական աշխատանքները/մագիստրոսական թեզերը, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, ներկայացվում են գրախոսման, ընդ որում՝ բակալավրի ավարտական աշխատանքի դեպքում՝ ներքին կամ արտաքին, իսկ մագիստրոսական թեզի դեպքում՝ արտաքին գրախոսի կողմից²: Գրախոսման համար հրավիրվում են արտադրության, նախագծակոնստրուկտորական, գիտական հիմնարկների և այլ

² «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ», կետ 4՝ հաստատված է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով:

կազմակերպությունների համապատասխան մասնագետները, որոնց կազմը, ամբիոնի վարիչի ներկայացմամբ, հաստատվում է ամբիոնի նիստում: Մագիստրոսական թեզի գրախոսման դեպքում գրախոսի գիտական աստիճանի առկայությունը, որպես կանոն, պարտադիր է:

1. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Բակալավրի ավարտական աշխատանքի օրինակելի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Բակալավրի ավարտական աշխատանքի օրինակելի կառուցվածքը և ներկայացվող պահանջները

Կառուցվածքը	Ներկայացվող պահանջները
<i>Տիտղոսաթերթ</i>	Տիտղոսաթերթը լրացվում է համաձայն Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի:
<i>Ստորագրությունների էջ</i>	Բակալավրի ավարտական աշխատանքի տիտղոսաթերթին հաջորդող էջում ստորագրում են ուսանողը, ղեկավարը, խորհրդատուները և ամբիոնի վարիչը (տե՛ս Հավելված 2):
<i>Բանալի (առանցքային) բառեր</i>	Բառեր կամ բառակապակցություններ (հասկացություններ, եզրույթներ, առանցքային բառեր և/կամ արտահայտություններ), որոնք հնարավորինս ամբողջականորեն բնորոշում են ավարտական աշխատանքի կամ դրա առանձին մասերի բովանդակությունը: Ավարտական աշխատանքի համառոտագրին նախորդում են ավարտական աշխատանքի բանալի (կամ առանցքային) բառերը: <i>Բանալի բառերը և համառոտագիրը ներկայացվում են նույն էջի վրա:</i>
<i>Համառոտագիր</i>	համառոտագիրը ներկայացվում է այն լեզվով, որով շարադրված է աշխատանքը՝ 500-1000 բառով (0,5-1 էջի սահմաններում ներկայացվում է աշխատանքի բուն էությունը՝ հիմնական նպատակը, խնդիրները, արդյունքը/ եզրակացությունը: Տրվում են աշխատանքի հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումները:
<i>Բովանդակություն</i>	Հերթականությամբ ներկայացվում են աշխատանքի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում), որոնք կցվում են աշխատանքին:
<i>Ներածություն</i>	Ներկայացվում են աշխատանքի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսական և/կամ կիրառական նշանակությունը:

<i>Հիմնական մաս</i>	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, իրականացված նախագծի կամ հետազոտության համառոտ նկարագրությունը, կիրառված մեթոդների ուսումնասիրության արդյունքների շարադրումը և վերլուծությունը:
<i>Եզրակացություններ</i>	Ներկայացվում են եզրակացությունները, որոնք ամփոփում են աշխատանքի արդյունքները:
<i>Օգտագործված գրականության ցանկ</i>	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է աշխատանքն իրականացնելիս և որին համապատասխան հղումներ են արված:
<i>Հղումներ</i>	Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում 8 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1, երկու կողմից հավասարեցված (alignment: Justify): Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (թավ տառերով՝ Bold), այնուհետև՝ աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, թվականը, հղվող աշխատանքի էջերի ընդհանուր քանակը:
<i>Հավելվածներ</i>	Առկայության դեպքում կցվում են աշխատանքին:

3. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 3.1. Բակալավրի ավարտական աշխատանքը պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր, և էլեկտրոնային PDF տարբերակով (օրինակ՝ CD տարբերակով): Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից՝ 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Ավարտական աշխատանքը ներկայացվում է միակողմանի տպագրությամբ: Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Աշխատանքի յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են թղթի ստորին մասի կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը հանդիսանում է աշխատանքի 4-րդ էջը:

Աշխատանքում առկա աղյուսակները, գրաֆիկները, նկարներն, գծապատկերները, ինչպես նաև հավելվածները համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում՝ աջ անկյունում: Աշխատանքում առկա հավելվածները ներկայացվում են նոր էջով, որի վերին աջ անկյունում նշվում է հավելվածի անվանումը, հերթական համարը ծանոթագրությունները (անհրաժեշտության դեպքում):

- 3.2. Աշխատանքի վերջում՝ բնագրի լեզվով տրվում է օգտագործված գրականության ցանկը: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, ... // URL: <http://www.info...>, 26.11.2018):

- 3.3. Հղումները տեքստում տրվում են փակ փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]) կամ տողատակում, ինչպես ներկայացված է օրինակում³:

- 3.4. Բակալավրի ավարտական աշխատանքի շարադրանքի, գծագրական մասի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ ելնելով տվյալ մասնագիտության առանձնահատկություններից:

4. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

³ Ի.Ղ. Վանյան., Նախագծի կառավարում: Ուս. ձեռնարկ, Երևան, ՃՇՀԱՀ, 2014թ., 180 էջ.:

4.1. Բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են ՃՇՀԱՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար սահմանված ուսումնական գործընթացի ժամանակացույցի համաձայն՝ համապատասխանաբար ավարտական 8-րդ և 10-րդ կիսամյակներում (տե՛ս Աղյուսակ 2):

4.2. Բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման աշխատանքները համակարգվում են ղեկավարի կողմից, խորհրդատվությամբ և վերահսկողությամբ:

Ղեկավարի պարտականություններն են.

- ա) բակալավրի ավարտական աշխատանքի առաջադրանքի կազմում,
- բ) աշխատանքի կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում և դրա իրականացման վերահսկողություն,
- գ) թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրության և օգտագործման համար առաջարկություններ կամ խորհրդատվություն, գրագողության կանոնների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- դ) խորհրդատվություն ուսանողին՝ բակալավրի ավարտական աշխատանքի կատարմանն առնչվող հարցերում՝ համաձայն խորհրդատվությունների համար ուսումնական մասի կողմից սահմանված կիսամյակային ժամանակացույցի,
- ե) ծանուցում ուսանողին՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,
- զ) խորհրդատվություն ուսանողին՝ ելույթի պատրաստման, պաշտպանության համար անհրաժեշտ ցուցադրական նյութերի ընտրության և անհրաժեշտ ցուցադրական հմտությունների ձեռքբերման ու զարգացման հարցում,
- է) աշխատանքի վերաբերյալ ղեկավարի գրավոր կարծիքի կազմում:

4.3. Ղեկավարի կարծիքում արտացոլվում են.

- ա) իրականացված աշխատանքի (նախագծի) արդիականությունը և կիրառելիությունը,
- բ) ուսանողի՝ կատարած աշխատանքի (նախագիծի) համառոտ բնութագիրը տեղեկատվության հետ աշխատելու և եզրակացություններ անելու կարողությունը,
- գ) Աշխատանքում առաջադրված խնդիրները և դրանց լուծման ուղիները
- դ) կատարված աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը
- ե) աշխատանքի համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,
- զ) երաշխավորություն աշխատանքի հրապարակային պաշտպանության համար:

4.4. Բակալավրի ավարտական աշխատանքի նախապաշտպանությունն

իրականացվում է մասնագիտացնող ամբիոնում՝ ամբիոնի վարիչի և ավարտական աշխատանքի ղեկավարի մասնակցությամբ:

4.5. Բակալավրի ավարտական աշխատանքի նախապաշտպանության նպատակն է ուղղորդել շրջանավարտին աշխատանքի հրապարակային պաշտպանությանը:

Բակալավրի ավարտական աշխատանքի նախապաշտպանության ժամանակ ամփոփվում են սովորողի կողմից իրականացված աշխատանքները, մատնանշվում են աշխատանքի բարելավման ուղիները, ներկայացվում են աշխատանքի պաշտպանության առավել շահեկան եղանակները:

4.6. Էական դիտողությունների առկայության դեպքում՝ շրջանավարտը լրամշակում է աշխատանքը և, մեկ շաբաթվա ընթացքում, այն ներկայացնում է մասնագիտացնող ամբիոն: Եթե աշխատանքը չի լրամշակվում, ապա աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության և աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

4.7. Աշխատանքի նախապաշտպանության ընթացքում գրագողության⁴ հայտնաբերման դեպքում մասնագիտացնող ամբիոնում կազմվում է համապատասխան արձանագրություն, որը ներկայացվում է ֆակուլտետի ղեկանին, այնուհետև՝ քննարկվում ֆակուլտետի խորհրդում: Ֆակուլտետային խորհրդում քննարկվելուց հետո աշխատանքի բարելավման ուղղությամբ ուսանողին ներկայացվում են առաջարկություններ:

4.8. Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

4.9. Բակալավրի ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կարգի⁵:

Աղյուսակ 2. Բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և պաշտպանության ժամանակացույց

Գործողություն	Վերջնաժամկետ
Բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի ընտրություն և հաստատում, համապատասխան ղեկավարի նշանակում և հրամանագրում	7-րդ (հեռակա՝ 9-րդ) կիսամյակի ավարտ

⁴ «Ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենք ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն», ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, գլուխ 5, հոդված 65, 4-րդ կետ (ընդունվել է 15.06.2006):

⁵ «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»՝ հաստատված է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով:

Աշխատանքի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում, գրականության վերլուծություն/մշակում	Ավարտական կիսամյակ՝ փետրվար
Աշխատանքի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի ներկայացում և քննարկում մասնագիտական ամբիոնում, որոնց հիման վրա իրականացվում է աշխատանքի կատարման առաջընթացի միջանկյալ ստուգում:	Ավարտական կիսամյակ՝ մարտի վերջ
Աշխատանքի արդյունքների ամփոփում, ղեկավարի կարծիքի ներկայացում, աշխատանքի նախապաշտպանություն: Էական դիտողությունների առկայության դեպքում՝ աշխատանքի լրամշակում և ներկայացում մեկ շաբաթվա ընթացքում	Ավարտական կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ
Մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքի գրախոսության կազմակերպում (տե՛ս Հավելված 3)	Ավարտական կիսամյակ, գրախոսականի ներկայացում մասնագիտական ամբիոն պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ
Բակալավրի ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում	8-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 10-րդ) կիսամյակի ավարտ ⁶

5. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- 5.1. Բակալավրի ավարտական աշխատանքի գնահատումն իրականացվում է 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորոշիչների (տե՛ս Աղյուսակ 3):
- 5.2. Ուսանողի ամփոփիչ միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած միավորների միջինն է:
- 5.3. Ուսանողի ավարտական աշխատանքը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:
- 5.4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողների ներկայությամբ:

⁶ Բակալավրի ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության ժամկետները սահմանվում են ՃՀԱՀ ուսումնական գործընթացի ժամանակացույցով:

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

- 6.1. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:
- 6.2. Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո՝ դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին: *այս կետը տեղափոխել 6.3*
- 6.3. Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների՝ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» վերոնշյալ կարգի (այսուհետև՝ Կարգ) ընթացակարգային դրույթների խախտումներ: *այս կետը տեղափոխել 6.2*
- 6.4. Հանձնաժողովի նախագահը, դիմումը ստանալուց անմիջապես հետո, շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն սույն կարգի 5.1. կետում սահմանված չափանիշների և չափորոշիչների:
- 6.5. Գնահատման գործընթացում ընթացակարգերի կիրարկման և գնահատման միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում՝ հանձնաժողովը.
- ա) փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,
 - բ) չի փոխում գնահատականը, եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա,
 - գ) չեղարկում է պաշտպանության արդյունքները, եթե առկա են Կարգի ընթացակարգային լուրջ խախտումներ և անմիջապես կազմակերպում է նոր պաշտպանություն:

Աղյուսակ 3. Բակալավրի ավարտական աշխատանքի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները

Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն _____

Աշխատանքի թեման _____

Հանձնաժողովի անդամ՝ պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը, ազգանունը և անունը _____

_____, _____, 20__թ. Անփոփիչ միավորը* Գնահատականը** _____ Ստորագրություն _____

*Անփոփիչ միավորը յուրաքանչյուր չափորոշիչի համար դրված միավորների հանրագումարն է, որն առավելագույնը կարող է կազմել 20 միավոր:

**Անփոփիչ միավորի հիման վրա դրվում է գնահատականը՝ 5-գերազանց (18-20 միավոր), 4-լավ (14-17 միավոր), 3-բավարար (8-13 միավոր), 2-անբավարար (0-7 միավոր):

Չափորոշիչներ/ Միավորներ	Չի համապատասխանում չափորոշիչին	Մասամբ է համապատասխանում չափորոշիչին	Լիովին համապատասխանում է չափորոշիչին	Ստորագրություն
1. Ավարտական աշխատանքի թեման, շարադրումը և ձևավորումը				
<i>Ավարտական աշխատանքի թեմայի արդիականությունը</i>	Ընտրված թեման արդիական չէ և չի նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը:	Ընտրված թեման բավականին արդիական է, սակայն ուսանողին հնարավորություն չի նպաստում ուսանողի մասնագիտական զարգացմանը:	Թեման խիստ արդիական է և նպաստում է ուսանողի մասնագիտական զարգացմանը:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
<i>Աշխատանքի նպատակի և խնդիրների սահմանումը</i>	Աշխատանքի նպատակներն ու խնդիրները հստակ չեն և սահմանված են անորոշ կերպով:	Աշխատանքի նպատակներն ու խնդիրները հստակ են, սակայն աշխատանքում սահմանված են անորոշ կերպով:	Աշխատանքի նպատակներն ու խնդիրները հստակ են և պարզորոշ սահմանված են աշխատանքում:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	

Աշխատանքի շարադրումը	Ավարտական աշխատանքը շարադրանքը հստակ չէ, գրված է անգրագետ և առանց տրամաբանական հաջորդականության:	Ավարտական աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված, սակայն աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները մասամբ են համապատասխանում բովանդակությանը:	Ավարտական աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
Աշխատանքի համապատասխանությունը տեխնիկական պահանջներին	Աշխատանքը ձևավորված է առանց տրված տեխնիկական պահանջների պահպանման, բացակայում են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն):	Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների, սակայն բացակայում են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն):	Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Առկա են աշխատանքի արդյունքները հիմնավորող տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն):	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	

2. Հիմնարար գիտելիքները

Հիմնարար գիտելիքների առկայությունը	Աշխատանքում բացակայում են ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները:	Աշխատանքում առկա են ոլորտի հիմնարար հասկացություններ և գիտելիքներ, սակայն չի երևում ոլորտի տեսությունների, մեթոդների իմացությունը:	Աշխատանքում արտացոլվում է ոլորտի հիմնարար հասկացությունների և գիտելիքների, տեսությունների, մեթոդների և առաջադեմ գիտելիքների իմացությունը:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
Առանցքային հայեցակարգերի նկարագիրը	Թեմային վերաբերվող առանցքային հայեցակարգերի նկարագիրը բացակայում է:	Աշխատանքում առկա է առանցքային հայեցակարգերի նկարագրությունը, սակայն բացակայում է դրանց քննադատական վերլուծությունը:	Աշխատանքում առկա է առանցքային հայեցակարգերի նկարագրությունը և դրանց քննադատական վերլուծությունը:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
Տվյալների հավաքագրման մեթոդները և դրանց համապատասխանությունը	Տվյալների հավաքագրման մեթոդները նկարագրված չեն:	Տվյալների հավաքագրման մեթոդները նկարագրված են, սակայն դրանց համապատասխանությունը դրված խնդրի լուծմանը հիմնավորված չէ:	Տվյալների հավաքագրման մեթոդները նկարագրված են և դրանց համապատասխանությունը դրված խնդրի լուծմանը հիմնավորված է:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
Տվյալների վերլուծության մեթոդների նկարագրությունը	Տվյալների վերլուծության մեթոդները նկարագրված չեն:	Տվյալների վերլուծության մեթոդները նկարագրված են, սակայն հիմնավորված չեն:	Տվյալների վերլուծության մեթոդները նկարագրված և հիմնավորված են:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	

3. Աշխատանքի իրականացումը				
<i>Ինքնուրույնությունը</i>	Ուսանողն ունակ չէր ինքնուրույն, սահմանված ժամկետներում և համաձայն դրված խնդիրների իրականացնել աշխատանքը:	Ուսանողն աշխատանքն իրականացրել է ինքնուրույն, սահմանված ժամկետներում, սակայն ոչ համաձայն դրված խնդիրներին:	Ուսանողն աշխատանքն իրականացրել է ինքնուրույն, սահմանված ժամկետներում և համաձայն դրված խնդիրներին:	
	0 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	
<i>Տվյալների հավաքագրումը</i>	Հավաքագրված տվյալները ճշգրիտ չեն և ուղղված չեն խնդրի լուծմանը:	Հավաքագրված տվյալները ճշգրիտ են, սակայն ուղղված չեն խնդրի լուծմանը:	Հավաքագրված տվյալները ճշգրիտ են և ուղղված են խնդրի լուծմանը:	
	0 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	

4. Արդյունքները				
<i>Աշխատանքում սահմանված խնդիրների լուծումը</i>	Աշխատանքում սահմանված խնդիրների լուծումն ապահովված չէ:	Աշխատանքում սահմանված խնդիրների լուծումն ապահովված է մասամբ:	Աշխատանքում սահմանված խնդիրների լուծումը լիովին ապահովված է:	
	0 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	
<i>Եզրակացություններ և առաջարկություններ</i>	Եզրակացությունները և առաջարկությունները հիմնավորված չեն կամ բացակայում են:	Եզրակացությունները և առաջարկությունները մասամբ են բավարարում առաջադրված խնդիրներին և հիմնավորված են մասամբ:	Եզրակացությունները և առաջարկությունները հիմնավորված են:	
	0 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	2 <input type="checkbox"/>	

5. Աշխատանքի ներկայացումը				
<i>Ներկայացման ոճը</i>	Ներկայացումը ժամանակատար է, զեկուցողը չի ներկայացնում աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, բովանդակությունը և արդյունքները:	Ներկայացումը ժամանակատար է և զեկուցողը մասամբ է ներկայացնում աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, բովանդակությունը և արդյունքները:	Ներկայացումը ժամանակատար չէ և զեկուցողը լիովին ներկայացնում է աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, բովանդակությունը և արդյունքները:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
<i>Ցուցադրական նյութերը</i>	Ձեկուցողն օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք չեն արտացոլում և պարզաբանում աշխատանքի բովանդակությունը:	Ձեկուցողն օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք մասամբ են արտացոլում և պարզաբանում աշխատանքի բովանդակությունը:	Ձեկուցողն օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք լիովին արտացոլում և պարզաբանում են աշխատանքի բովանդակությունը:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
<i>Ձեկույցը</i>	Ձեկույցը փոխկապակցված չի ներկայացնում և չի բացատրում կատարված աշխատանքը, չի հիմնավորում ստացված արդյունքները:	Ձեկույցը հստակ է և հետևողական, սակայն չի կարողանում լիովին ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել ստացված արդյունքները:	Ձեկույցը հստակ է և հետևողական, կարողանում է փոխկապակցված ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել ստացված արդյունքները:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	
<i>Հարց ու պատասխան</i>	Ձեկուցողը տրվող հարցերին չի տալիս հիմնավորված և սպառիչ պատասխաններ:	Ձեկուցողը տրվող հարցերին պատասխանում է, սակայն դրանք հիմնավորված և սպառիչ չեն:	Ձեկուցողը հարցերին և դիտողություններին տալիս է հիմնավորված և սպառիչ պատասխաններ:	
	0 <input type="checkbox"/>	0.5 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	



**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ [16 pt, Bold]**

_____ **ՖԱԿՈՒԼՏԵՏ [14 pt, Bold]**

_____ **ԱՄԲԻՈՆ [14 pt, Bold]**

_____ **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ [14 pt, Bold]**

_____ **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ [14 pt, Bold]**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ [30 pt, Bold]

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ [18 pt, Bold]

ՈՒՍԱՆՈՂ(ՈՒՀԻ) _____ [16 pt, Bold]
(u.w.h.)

ԽՈՒՄԲ _____ [16 pt, Bold]

ՂԵԿԱՎԱՐ _____ [16 pt, Bold]
(u.w.h.)

_____ **բակալավրի**

(ճարտարապետության, ճարտարագիտության, արվեստի, ինֆորմատիկայի,
տնտեսագիտության, շրջակա միջավայրի, զբոսաշրջության)

որակավորման աստիճանի հայցման համար [14, Bold, Italic]

ԵՐԵՎԱՆ 2018 [13 pt, Bold]

Ուսանող(ուհի)՝ _____ [13 pt, Bold]
ստորագրություն

ազգանուն, անուն

Ղեկավար՝ _____
ստորագրություն. ընդունված է աշխատանքի տպագիր և էլեկտրոնային
տարբերակները

[13 pt, Bold]

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

Խորհրդատուներ՝ _____ [13 pt, Bold, Italic]
ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

_____ [13 pt, Bold, Italic]
ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրելի պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____ [13 pt, Bold]
ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

« _____ » _____ 20__ թ.

ԿԱՐԾԻՔ

ՃՇՅԱՀ _____ ֆակուլտետի բակալավրիատի ուսանող

_____ -ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

(թեմայի անվանումը)

ավարտական աշխատանքի վերաբերյալ⁵

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

2. Աշխատանքի կատարումը և արդյունքները

3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը

⁵ Գրախոսը նախապես պետք է ծանոթ լինի սույն կարգում սահմանված բակալավրի ավարտական աշխատանքի գնահատման չափանիշներին:

4. Դիտողություններ

5. Եզրակացություն (աշխատանքը բավարարում է/չի բավարարում բակալավրի ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է/արժանի չէ սվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորման աստիճանի շնորհմանը)

Գրախոս՝

(ազգանուն, անուն, հայրանուն)

(գիտական աստիճան և կոչում)

(աշխատանքի վայրը, պաշտոնը)

Ստորագրություն _____

«___» _____ 20__թ.



**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** [16 pt, Bold]

_____ **ՖԱԿՈՒԼՏԵՏ** [14 pt, Bold]

_____ **ԱՄԲԻՈՆ** [14 pt, Bold]

_____ **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** [14 pt, Bold]

_____ **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ** [14 pt, Bold]

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ [30 pt, Bold]

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ [18 pt, Bold]

ՈՒՍԱՆՈՂ(ՈՒՀԻ) _____ [16 pt, Bold]
(u.w.h.)

ԽՈՒՄԲ _____ [16 pt, Bold]

ՂԵԿԱՎԱՐ _____ [16 pt, Bold]
(u.w.h.)

_____ **մագիստրոսի**

(ճարտարապետության, ճարտարագիտության, արվեստի, ինֆորմատիկայի,
տնտեսագիտության, շրջակա միջավայրի, զբոսաշրջության, կառավարման)

որակավորման աստիճանի հայցման համար [14, Bold, Italic]

ԵՐԵՎԱՆ 2018 [13 pt, Bold]

Ուսանող(ուհի)՝ _____ [13 pt, Bold]
ստորագրություն

ազգանուն, անուն

Ղեկավար՝ _____
ստորագրություն. ընդունված է աշխատանքի տպագիր և էլեկտրոնային
տարբերակները

[13 pt, Bold]

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

Խորհրդատուներ՝ _____ [13 pt, Bold, Italic]
ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

_____ [13 pt, Bold, Italic]
ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____ [13 pt, Bold]
ստորագրություն

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

« _____ » _____ 20__ թ.

